

## ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ԱՌՆՉԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

### Զ. Ա. ԵՐՎԱՆՆԵԱՆ

Աշխարհի յուրաքանչյուր լեզու իր բնականոն զարգացման ընթացքում, երբ չկան նվաճող ցեղերի հետ խաչավորման կամ նվաճողների կողմից իրենց լեզուն պարտադրելու երևույթներ, միևնույն է, թեև դանդաղ, այնուամենայնիվ ենթարկվում է փոփոխությունների: Դա նախ և առաջ արտահայտվում է բառապաշարի փոփոխությամբ, բառերի վերափոխման ստեղծմամբ, բառիմաստների նեղացման, ընդլայնման, հոմանիշների դրսևորման ձևերով, իսկ քերականության մեջ՝ հոգնակերտների, հոլովական վերջավորությունների փոփոխմամբ և այլն:

Ինչպես հունգարացի ճանաչված լեզվաբան Մ. Սվոլեշն է ենթադրում, որևէ լեզվում բառապաշարի նորոգում է կատարվում 1000 տարվա ընթացքում 15 տոկոսի չափ<sup>1</sup>: Մեր օրերում տեխնիկայի, գիտության բուռն զարգացման պայմաններում հնարավոր է, որ այս տոկոսը ավելի է մեծացել, քանի որ կենցաղ քափանցած առօրյա գործածական իրերի, նոր նյութերի, դեղորայքի, դրամական միավորների, պաշտոնների, մտղաների անվանումների հորձանքը կենցաղից շատ արագ դուրս է մղում արդեն անգործածական դարձող հնաճ իրերի ու հասկացությունների անվանումները: Այսպես՝ ընդամենը ութ տասնամյակ է բաժանում մեզ Հովհաննես Թումանյանից, սակայն նրա ստեղծագործություններում գործածված բառերից մի մեծ քանակություն նոր սերնդի համար արդեն դարձել է անհասկանալի, ինչպես օրինակ՝ *զգիր, բեկյառ, պրիստավ, թավադ, լեհին, թամասուկ, թաղար, թուման, չուխա* և այլն:

Քանի որ աշխարհում չկան մեկուսացած լեզուներ, ուրեմն անխուսափելի են նաև լեզուների փոխադարձ ազդեցությունները նախ և առաջ փոխառությունների ձևով:

Միջին դարերում աշխարհի քաղաքական քարտեզի փոփոխության հետևանքով հայերենում ևս եվրոպական, արաբական, պարսկական և թուրքական լեզուներից ու նրանց բարբառներից բազմաթիվ փոխառություններ կատարվեցին, որոնց մեծ մասը մնայուն հետք թողեց մեր բարբառներում, անգամ աշխարհաբար գրական լեզվում:

Անխառն, մաքուր լեզուների չգոյությունը, անհիշելի ժամանակներից սկսած, հավաստում է այդ իրողության անխուսափելիությունը յուրաքանչյուր լեզվի համար՝ անկախ որևէ պայմանականությունից: Իսկ եթե որևէ ժողովուրդ նվաճվում է մեկ այլ ժողովրդի կողմից, և նվաճողները ստիպում են խոսել միայն իրենց լեզվով, ապա նման դեպքում արդեն տեղաբնիկները շատ արագ դառնում են օտարախոս և՛ նույնքան արագ էլ ձուլվում նվաճողներին:

Մինչև XI դարը հայ ժողովրդի բառապաշարում գերակշռող են եղել իրանական (պահլավական), հունական, ասորական փոխառությունները (վերջին երկուսը՝ հատկապես քրիստոնեության տարածման հետ կապված): Իրանական ազդեցությունը, սկսվելով պահլավական ժամանակաշրջանից (մ.թ.ա. VI-V դարերից), շարունակվել է նաև միջին դարերում, ուստի հսկայական ազդեցություն է թողել հայերենի վրա (նոր տվյալներով՝ մինչև 2000 փոխառություն): Այդ ազդեցությունն այնքան մեծ է եղել, որ եվրոպացի որոշ լեզվաբաններ հայերենը դիտել են իբրև պարսկերենի մի բարբառ կամ իրանական լեզու: Պատճառը մեծաքանակ իրանական փոխառություններն էին, որոնք գործածվում են առայսօր և այնպես են յուրացվել հայերենի կողմից, որ առանց այդ բառապաշարի չենք կարող լիարժեք կերպով արտահայտել մեր մտքերը:

<sup>1</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1981, էջ 77-78:

Նույնիսկ Հ. Աճառյանն է խոստովանում, որ պարսկերեն փոխառությունները «հետագային գերազանցելու էին բնիկ հայերեն բառերից (960-ը ընդդեմ 924-ի)»<sup>2</sup> (վիպասանական շրջանի հետ համեմատած): Նշվածում հնդեվրոպական (այսինքն՝ հայերենի բնիկ) արմատների թիվը<sup>3</sup>, ուռճացված լինելով հանդերձ, իրանական ազդեցության մասին ամբողջական պատկերացում տալ դարձյալ չի կարող:

Ինչպես կյանք մտնող ամեն մի երևույթ, այնպես էլ լեզու թափանցող փոխառությունները ժամանակի հասարակայնությունը նույնանշանակ չի ընդունում. մի խավը դիմադրում է, փորձում խոչընդոտել նոր բառերի մուտքը լեզու, մի այլ խավ, ընդհակառակը, խրախուսում է՝ այդ գործընթացում տեսնելով լեզվի զարգացման ու նրա բառապաշարի հարստացման առաջընթացը: Ահա թե անսքող հեզմանքով ինչ է գրում Ներսես Լամբրոնացին Կիլիկիայի թագավոր Լեոն Բ-ին ուղղված նամակում. «Տուք պատիւ անուանց *ամիրայ* և *հեծուպ* և *մարզպան* և *սպայասալար* և այսպիսիս, և մի՛ սիր և *պրոքսիմոս*, *զունդստապլ* և *մարաջախտ* և *ձիատր* և *լիճ*, որ լատինացուց է օրէն: Արդ փոխեցեք դուք զայս լատինացի ձև և զանուանսն և ի պարսիցն և ի հայոցն ձև և անուանս ըստ ձեր հարցն»<sup>4</sup>:

Պարսկերեն փոխառություններն այնքան խորն էին արմատավորվել հայերենի բառապաշարում ու հարազատ դարձել հայերի համար, որ նորամուտ լատինական փոխառությունները խորթ էին թվում, ուստի և Ն. Լաբրոնացին կոչ է անում թագավորին չիրաժարվել լատիներենն անվանումներից և չկառչել նախկինին՝ հայերի գործածած պարսկերեն ձևերին:

Բայց լեզուները, իհարկե, օտար փոխառությունները հրամաններով չեն կատարում, այլ անհրաժեշտությունից ելնելով: Եվրոպական նոր նվաճողների՝ խաչակիրների արշավանքների հետևանքով բնականոն ճանապարհով հայերենի բառապաշարին ավելացան նաև ֆրանկներից՝ եվրոպացիներից կատարված փոխառություններ, իսկ օսմաներենից, թաթար-մոնղոլերենից, թուրքերենից փոխառություններին զումարվեցին նախկինները՝ պարսկերենն ու արաբերենը:

Միջին հայերենով գրականության սկիզբնավորումը սկսվել է XI դարի 30-ական թվականներից (առաջին վկայությունը 1037 թվականին բժիշկ Աբուսայիդի ձեռքով գրված դեղատոմսն է): Իհարկե, գրավոր պահպանված այս վկայությունից շատ առաջ է սկսել գործել միջին հայերեն բանավոր խոսակցական լեզուն, և հետագայում էլ կողք կողքի շարունակում են հարատևել գրականն ու խոսակցականը՝ «ոամկորենը»: Օրինակ՝ Ներսես Շնորհալիքն ստեղծագործում էր և՛ գրաբարով, և՛ աշխարհաբար-միջին հայերենով. առակներն ու հանելուկները նա գրել է միջին հայերենով, իսկ «Ընդհանրականը», «Յիսուս որդին»՝ գրաբարով<sup>5</sup>:

Միջին հայերենի ուսումնասիրությամբ բազմաթիվ հայ և օտարազգի հեղինակներ են զբաղվել՝ Ա. Այտընյանը<sup>6</sup>, Ն. Բյուզանդացին<sup>7</sup>, Ղ. Հովհաննյանը<sup>8</sup>, Յ. Կարստը<sup>9</sup>,

<sup>2</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն (այսուհետև՝ ՀԼՊ), II մաս, Եր., 1951, էջ 75:

<sup>3</sup> Գ. Ղափանցյանը գրում է. «Հնդեվրոպական բառարմատների քանակը հայերենում Ա. Մեյեն չի անցկացնում 400-ից, հակառակ Հ. Աճառյանի, որ հասցնում է 713 «մաքուր»՝ արմատների, առանց «առարտեսակների», իսկ Հ. Հյուբշմանի մոտ կա մինչև 300 արմատ: Ըճմարտությունը անշուշտ 3-4 հարյուրների միջումն է» // Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, հին շրջան, Եր., 1961, էջ 295:

<sup>4</sup> Տե՛ս «Տեառն Ներսեսի Լամբրոնացոյ Տարսոսի եպիսկոպոսի ատենաբանութիւն և թուղթ և ճառք», Վեներտիկ, 1838, էջ 234-235:

<sup>5</sup> Տե՛ս «Ներսես Շնորհալիք», հոդվածների ժողովածու, Եր., 1982:

<sup>6</sup> Ա. Այտընեան, Զննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, Եր., 1982:

<sup>7</sup> Ն. Բյուզանդացի, Բառգիրք ստորին հայերենի (1884-1894) բացատրական բառարան՝ առանց Ջ-Ջ տառերի (անտիպ), Մատենադարանի արխիվ, թրքապանակ թիվ 235:

<sup>8</sup> Ղ. Հովհաննեան, Հետազոտութիւնք մախմեաց ոամկորենի վրայ, մասն I, տետր Ա և Բ, Վիեննա, 1897:

<sup>9</sup> J. Karst, Historische Grammatik des Kilikisch Armenischen, Strassburg, 1901; J. Karst, Wörterbuch des Mittelarmenischen (ձեռագիր), Մատենադարանի արխիվ, թրքապանակ թիվ 249:

Մ. Աբեղյանը<sup>9</sup>, Ս. Ղազարյանը<sup>10</sup>, Ռ. Ղազարյանը և Հ. Ավետիսյանը<sup>11</sup>, Հ. Աճառյանի անվան ԳԱ լեզվաբանության ինստիտուտից՝ Հ. Մուրադյանը, Մ. Մուրադյանը, Ս. Անթոսյանը<sup>12</sup>:

Միջին հայերենով են ստեղծագործել հատկապես տաղերգուներն ու աշուղները, որովհետև այն դարձել էր ժողովրդի հաղորդակցության հիմնական միջոցը, իսկ գրաբարը վաղուց արդեն ժողովրդին անհասկանալի լեզու էր և մնում էր միայն որպես եկեղեցական-գրական լեզու, պատմիչների լեզու:

Իսլամ ընդունող ժողովուրդները, հատկապես կրոնական եզերք յուրացնելու նպատակով, մեծաքանակ փոխառություններ կատարելով արաբերենից, յուրացրին նաև արաբերենի բառապաշարի 60-70 տոկոսը: Պարսկերենի, աֆղաներենի և ապա թուրքերենի բառապաշարում ձևավորված արևելյան միջազգային բառարանի\* բառապաշարն ամբողջապես լուծվեց նաև օսմաներենի և ապա թուրքերենի մեջ: Թուրքերեն - արաբերեն փոխառությունները կատարվում էին և՛ ուղղակի արաբերենից, և՛ պարսկերենից՝ միջնորդաբար, ուստի թուրքերենից կատարված փոխառությունները շատ անգամ հնարավոր չէ ճշտել, թե որ ճանապարհով են անցել հայերենին: Հ. Աճառյանը, որ արևելյան միջազգային այդ բառարանում 1147 բառ է թվարկում<sup>13</sup>, ընդգծում է այդ հանգամանքը՝ նշելով. «Որևէ բառ, որ օրինակ՝ արաբերեն է ինքնին և գտնվում է հայերենի մեջ, կարող է թե՛ ուղղակի արաբերենից, թե՛ պարսկերենից և թե՛ թուրքերենից անցած լինել մեզ, բայց կարելի չէ ամեն անգամ ճշտել, թե հատկապես որ լեզվից է»<sup>14</sup>:

Միջազգային արևելյան բառարանի մեջ գտնվող արաբերեն-պարսկերեն բառերը գրեթե առկա են ոչ միայն թուրքերենում, այլև հայերենում, ուստի Աճառյանը եզրակացնում է, որ պարսկերեն, արաբերեն փոխառությունների մեծ մասը վերահաստատվել է հայերենում թուրքերենի միջոցով: «Սրա պարզ ապացույցն այն է, որ հիշյալ 1147 արաբերեն ու պարսկերեն բառերից այսօր մեր լեզվի մեջ կյանք ունեն գրեթե միայն այն բառերը, որոնք թուրքերենի մեջ էլ կան»<sup>15</sup>:

Թեև թուրքերը Հայաստան ներխուժեցին XI դարի սկզբին՝ պարտության մատնելով Սենեքերիմ Արծրունուն, սակայն վերջնականապես նրանք Հայաստանում ամրապնդվեցին 1473 թվականին՝ օսմանցիների օրոք: Այնուամենայնիվ, նախապես թուրքերենի ազդեցությունը էական չէր կարող լինել հայերենի վրա, որովհետև Հայաստանը վերջնականապես և ամբողջությամբ նվաճված չէր: Շուրջ 900 տարի հայերը գտնվում էին թուրք-թաթարական ցեղերի և զանազան ժողովուրդների գերիշխանության տակ. նախ՝ սելջուկների, Պարսկաստանի թուրքերի, մոնղոլ-թաթարների, սելջուկ-թուրքերի, թուրքմենական

\* Մ. Աբեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, ՀՍԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր, թիվ 1-3, 1927:

<sup>10</sup> Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1954, նույնի Միջին հայերեն, գիրք Ա, Եր., 1960:

<sup>11</sup> Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ա հ., Եր., 1987, Բ հ, Եր., 1992:

<sup>12</sup> «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Ա հ., Եր., 1972, «Հայոց լեզվի պատմական քերականություն», հ. II, 1975:

\* Դեռևս մեր թվարկությունից առաջ իրենց տիրապետության սահմանները մեծ չափերով տարածած աշխարհակալական նկրտումներ ունեցող պարսիկների լեզուն կամա թե ակամա իր ազդեցությունը պիտի ունենար նվաճված ժողովուրդների լեզուների վրա: Իսլամն ընդունած շատ ժողովուրդների լեզուներ, արաբերենի հետ զուգակցվելով, ձևավորեցին, այսպես կոչված, միջազգային մի բառապաշար, որի հիմքում պարսկերենն էր: Կրոնական, իրավական և նման նոր հասկացությունների համար ստեղծված այդ գործուն բառապաշարը Հ. Աճառյանն անվանեց արևելյան միջազգային բառարան: Վերջինիս տարածմանը նպաստեց նաև մոտ հազարամյա նվաճողական քաղաքականություն վարող թուրքերի լեզուն՝ թուրքերենը:

<sup>13</sup> Տե՛ս Հ. Աճառյան, ՀԼՊ, II մաս, էջ 281:

<sup>14</sup> Անդ:

<sup>15</sup> Անդ:

օղուզ և կարա ու ակ կոյունդուների և, վերջապես, օսմանցիների կրնկի տակ: Մրանց բու-  
լորի լեզուները ըստ էության նույնն էին՝ նվազ տարբերություններով և տարբեր անվա-  
նումներով: «**Թուրքերեն** բառի տակ կարող ենք հասկանալ այս բոլորի լեզուն»<sup>16</sup>, - նշում է  
Հ. Աճառյանը:

Պահլավերենից, իրանական այլ լեզուներից հետո թերևս հայերենի բառապաշարի  
վրա ամենամեծ ազդեցությունը թուրքերենինն է (հունարենից՝ 900, արաբերենից՝ մինչև  
1000, ասորերենից՝ 200 բառ և այլն): Միայն թե այստեղ մի խոշոր տարբերություն կա. ե-  
թե իրանական փոխառությունների թիվը մոտավորապես (նոր տվյալներով) հասնում է  
2000-ի, և դրանց մեծ մասը գործածական է այսօր էլ մեր և՛ գրական լեզվում, և՛ բարբառ-  
ներում, ապա թուրքերեն փոխառությունները թեև անգամ շատ են, ինչպես Հ. Աճառյանն  
է ասում՝ 4000, սակայն այդ մեծ քանակությունից գործածվողները շատ քիչ են՝ 170 բառ,  
իսկ գրական լեզվի մեջ պահպանվում է 20 բառից մի քիչ ավելի<sup>17</sup>:

Թուրքերենից կատարված փոխառությունների մասն մեծ քանակը նախ պայմանա-  
վորված է այն երկար ժամանակաշրջանով, որ հայերը մնացին թուրքերի տիրապետու-  
թյան տակ, և նրանով, որ վերջիններս պարտադրում էին խոսել իրենց պետական լեզվով՝  
թուրքերենով. թերևս այս էր պատճառը, որ Արևմտյան Անատոլիայի բազմաթիվ հայ գաղթ-  
օջախներ (Կեսարիա, Յոզգուրթ, Քոնյա, Աֆիոն-Քարահիսար, Ադանա և այլն) դարձան  
թրքախոս:

Այստեղ մի ուղղում ևս պիտի անել. թուրքերենից կատարված փոխառությունների մի  
մասը բնիկ թուրքերեն բառեր չէին. դրանք պարսկերեն, արաբերեն էին՝ թուրքերեն ար-  
տասանությամբ: Ուստի արաբերենի ազդեցությունը հայերենի վրա պիտի քննել երկու  
դիրքերից՝ բանավոր՝ խոսակցական ազդեցության և գրավոր՝ գրական քարգմանություն-  
ների (բժշկարաններ, բուսանուններ, ձեռնարկներ) միջոցով կատարված փոխառություն-  
ների առումով: Մեր գրական հուշարձաններում հանդիպող արաբերեն բառերը, երբեմն  
միայն մեկ կամ երկու անգամ գործածված լինելով, ոչ մի ազդեցություն չէին կարող ունե-  
ցնալ հայերենի վրա, եթե չլինեին առօրեական բանավոր շփումները: Ուրեմն գրավոր ճա-  
նապարհով եկած արաբերեն բառերը չէին կարող ժողովրդախոսակցական լեզվի մեջ մտ-  
նել. այդ կարող էին անել միայն կենդանի շփումների արգասիք փոխառյալ բառերը: Հ. Ա-  
ճառյանը եզրակացնում է. «...Արևելքում կազմված էր որոշ միջազգային բառարան. և ա-  
հա այդ բառարանը անցավ նաև հայերին, եթե ոչ ամբողջությամբ, զոնե մեծ մասամբ»<sup>18</sup>:

Իհարկե, միջազգային արևելյան բառարանի մեջ արաբերենի ունեցած դերի մասին  
խոսելիս չպիտի մոռանալ հին սեմական լեզուներից աքքադերենի մասին ևս, որը 2000  
տարի Միջագետքին հարևան երկրներում (նաև Հայաստանում) եղել է միջազգային լեզու  
և ազդել նաև պարսկերենի վրա: Այսպես օրինակ՝ *դայիր*, *զամբիլ*, *զիբիլ* և այլն. կարող  
ենք սեմական ծագում ունեցող ևս մի քանի բառ բերել, որ առկա են աքքադերենում, ինչ-  
պես՝ *ատեան* բառը, որն աքքադերեն ծագում ունի. *adinnu* «ատեն, ժամանակ», այսինքն՝  
կարող են լինել փոխառություններ ավելի վաղ շրջանից, քան արաբերենի հետ շփումների  
ժամանակներն են, սակայն այդ մասին գրավոր վկայությունները շատ քիչ են:

Միջազգային արևելյան բառարանից շատ են օգտվել հայ տաղասացները: Եվ քանի  
որ նրանք գրում էին ժողովրդի համար, ուստի ստիպված էին օգտագործել ժողովրդախո-  
սակցական լեզվի բառապաշարը:

Ընդհանրապես գրքային, գրական ճանապարհով հայերենում մեկ-երկու կամ մի քա-  
նի անգամ հիշատակված բառերը սխալ է փոխառություն համարելը, այս պատճառով  
մենք անդրադառնում ենք միայն ակտիվ ժողովրդախոսակցական փոխառություններին:  
«Տարակույս չկա, - գրում է Աճառյանը, - որ արաբական փոխառությանց մի մասը՝ հունական

<sup>16</sup> Աճռ, էջ 258:

<sup>17</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա և թուրքերենի փոխառվող բա-  
ռերը հայերենի մեջ, ԷԱԺ, Գ հ., Մոսկվա-Վաղարշապատ, 1902, էջ 225-295: Տե՛ս նաև ՀԼՊ, II մաս,  
էջ 270:

<sup>18</sup> Հ. Աճառյան, ՀԼՊ, 2-րդ մաս, էջ 186:

փոխառությանց նման գուտ տառադարձություն է և քնավ չէ մտած հայոց ոչ գրական և ոչ էլ ժողովրդական լեզվի մեջ: Սրան ապացույց է ծառայում այն հանգամանքը, որ նրանց մեջ կան այնպիսի ձևեր, որոնք առաջացել են արաբական բառերի սխալ կետադրությամբ (*տառերի վրա դրվող ձայնանիշերի - Զ. Ե.*), կամ սխալ ընթերցմամբ: Այսպես՝ *կյունուս* «քոյս ինչ» Վստկ. 209, «... և թէ առնուս *կյունուս* և եփես զհնեաւ, օգտէ»: այս բառի դեմ հույն բնագիրն ունի *ϕλδμως* «խննդատ», որ արաբերենն թարգմանության մեջ տառադարձվելով գրվել է *فلوس* *ֆլոմոս*, հայ թարգմանը կարդացել է սխալմամբ *فلوس* *ֆլնոմս* և կամ գուցե այդպես է գտել իր գործածած ձեռագրում. երկու դեպքում էլ *կյունուս* հառաջանում է ձեռագրի միջոցով և ժողովրդի բերանը մտած բառ չէ»<sup>19</sup>:

Նման սխալ ընթերցումների բազմաթիվ այլ օրինակներ էլ է քերում Հ. Աճառյանն իր գրքում<sup>20</sup>, բայց և այնպես զիտական, բուսական կամ դեղաբանական-ախտաբանական այդպիսի եզրերը, այնուամենայնիվ, ընդգրկում է արաբերեն փոխառությունների ընդհանուր ցուցակի մեջ, որը, մեր կարծիքով, ճիշտ չի կարելի համարել: Եթե Հ. Աճառյանի կազմած արաբական «փոխառությունների» ցուցակից (702-ից) հանենք նման բառերը, ապա կեսից ավելին կդառնա անվավեր:

Այսպես, եթե քննենք 702-ից շուրջ 10 տոկոսը՝ 72 բառը, ապա պարզ կդառնա, թե որ մասն է մնում որպես իրական փոխառություն՝ արաբերենից: Պիտի հանվեն *ապրուսան* «վառվառուկ խտուրը», *աթխար* (բույսը), *այատոնի* (խտուր), *այպուճ* (բույսը), *այաուս* (բույսը), *ախախիա* (ծառը), *ախիհոս* (բույսը), *ախիոն* (բույսը), *ախլիմիա* (բույսը), *ախլասչ* (բույսը), *ախեսաւան* (բույսը), *ախունա* (բույսը), *ակրկարիայ* (բույսը), *աղեղ* (քարը), *աղիատայ* (եփած ռուպ), *ամիաս* (խաղողը), *ամլաճ* (բույսը), *ամպաճ*, *անպ* (պտուղը), *ամրուսիա* (խտուր), *անդարա* (խտուր), *անդուն* (զիշահոտ վարդ), *անճիտան* (բույսը), *անճուպար* (բույսը), *ասուկալ* (ամ) ին, *ասպրանճ* (բույսը), *ասխիս* (բույսը), *ասկորդիոն* (բույսը), *ասամազուն* (բույսը), *աստախտոս* (բույսը), *աստուլուխիայ* (բույսը), *աստուս* (բույսը), *արաք* (բույսը), *արտանիսա* (բույսը), *ափարբիոն* (բույսը) բառերը:

72-ից 30-ը չի գործածվում հայերեն ո՛չ գրական լեզվում, ո՛չ էլ որևէ բարբառում, այսինքն՝ 702-ի շուրջ կեսը եղել են **գրքային** եզրերի պարզ տառադարձումներ, և ժողովուրդը երբեք չի գործածել իր լեզվում: Ուստի ճիշտ կլինի միջին հայերենում օտար փոխառությունները որոշելու չափանիշը համարել դրանց՝ խոսակցականում գործածական լինելու փաստը:

Ճշտենք մի փաստ ևս: Ինչպես նշեցինք, Հ. Աճառյանն արձանագրում է արաբերենից միջին հայերենում փոխառյալ 702 բառ<sup>21</sup>: Իսկ Յ. Կարստի «Միջին հայերենի բառարանում» (*Wörterbuch des Mittelarmenischen*), որ գրվել է Հ. Աճառյանից անկախ, այդ թիվը հասցված է 1100-ի: Ավելի ուշ արաբերեն փոխառությունների մասին եղել են հոդվածներ, որոնցով շուրջ 100-ով ավելանում է արաբերենից հայերենի փոխառած բառերի թիվը: Գուցե և հետագայում այս թիվը նորից աճի, քանի որ միջնադարյան բազմաթիվ ձեռագրեր սպասում են իրենց հետազոտողներին: Այս թվերը, կարծում ենք, զգալիորեն կպակասեն, եթե դրանցից հանենք այն բառերը, որոնք հայերենում արաբերենից թարգմանված գրականության մեջ մեկ կամ մի քանի անգամ հիշատակված են որպես բուսանուններ, հիվանդության անվանումներ, աստղագիտական բառապաշարի եզրեր և այլն, որոնք այդպես էլ ժողովրդախոսակցական լեզվում մտավածք չեն տվել:

Այնուհանդերձ, ժողովրդախոսակցական լեզվին ուղղակի կամ միջնորդաբար անցած և կրկնակիորեն պարսկերենի ու թուրքերենի միջնորդությամբ վերահաստատված արաբիզմները կկազմեն թերևս 1000-ից ոչ պակաս մի թիվ: Մենք նկատի ունենք միջին դարերի՝ հատկապես ընդհանուր տարածում գտած բառերը և ոչ թե առանձին փոխառությունները: Ըստ Մ. Մուրադյանի՝ ժողովրդական փոխառությունները միջին հայերենում 500 են. «Միջին հայերենը մեզ ավանդել է շուրջ 500 ժողովրդական փոխառություն, որոնք

<sup>19</sup> Աճռ, էջ 185:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 185-188:

<sup>21</sup> Տե՛ս անդ, էջ 188:

Ժամանակին եղել են ավելի գործածական, քան գրական փոխառությունները»<sup>22</sup>, - գրում է նա: Իսկ տաղերգուների բառապաշարում գործածվող արաբերեն փոխառությունները այդ բառապաշարի բառերից ամենատարածվածներն են, այլապես տաղերգուների խոսքը, եթե անհասկանալի կամ հազվադեպ գործածական բառերով հորինված լիներ, իր նպատակին չէր կարող հասնել:

Հայերենում եղած արաբերեն առանձին բառերի մասին մինչև Հ. Հյուբշմանի ուսումնասիրությունը եղել են հիշատակումներ, սակայն 1892 թվականին մեծ հայագետը «Հայերենի սեմական փոխառությունները» ուսումնասիրության մեջ այն կարծիքը հայտնեց, որ հայերենում արաբերենից փոխառություններն սկսվում են միայն 640 թվականից, երբ արաբները նվաճեցին Հայաստանը<sup>23</sup>:

Իհարկե, հանդիպում են դեռևս դասական գրաբարի ժամանակներից եկող արաբերեն բառեր. դրանք առկա են Աստվածաշնչում և այլ երկերում, սակայն Հ. Հյուբշմանը արաբների արշավանքներից ավելի վաղ կատարված արաբերեն փոխառությունների գոյությունը հայերենում մերժում է՝ համարելով դրանք ավելի ուշ ժամանակներում գրչիների արած հավելագրումներ<sup>24</sup>:

Պրոֆեսոր Ն. Սկրտչյանը, բերելով ավելի քան 60 արաբական փոխառություններ, անհիմն է համարում Հ. Հյուբշմանի կասկածներն ավելի վաղ հայերենի՝ արաբերենից կատարած փոխառությունների խնդրում՝ հիմնավորելով, որ Հայաստանի պատմական սահմանները ձգվում էին մինչև «Սահման տաճկաց», այսինքն՝ մինչև արաբների երկիր. հարյուրամյակներ առաջ՝ մինչև արաբների արշավանքները, հայերը և արաբները եղել են դրացիներ, որի պատճառով էլ կասկածի տակ չպիտի առնել հայերենում ավելի վաղ արաբերեն փոխառությունների գոյությունը<sup>25</sup>:

Սկսած 640 թվականից, երբ «առաջին արաբական բանակը ոտք կոխեց Հայաստան և մինչև Դ-վին առաջացավ»<sup>26</sup>, արաբա-հայ դրացիական հարաբերություններին հաջորդեց արաբների կողմից նվաճողական քաղաքականությունը, որ տևեց մինչև 885 թվականը, մինչև խալիֆաթի՝ Բագրատունյաց թագավորության գոյության ճանաչումը. Հայաստանը շուրջ 250 տարի մնաց նրանց տիրապետության տակ:

Երրորդ անգամ հայերը արաբների հետ հարաբերության մեջ մտան XII դարից սկսած, երբ Կիլիկիայում հիմնեցին իրենց պետությունը՝ դառնալով Ասորիքի արաբների հարևան: Հետևելով Հ. Հյուբշմանին՝ Հ. Աճառյանը կարծում է, թե ընդհանուր առմամբ հայ-արաբական շփումները փաստորեն սկսվել են 640-ից և հասնում են մինչև մեր օրերը: Մինչդեռ, Ն. Սկրտչյանը հավաստիացնում է, որ այդ մերժեցումները շատ ավելի վաղ են սկսվել և մի քանի հազարամյակների պատմություն ունեն<sup>27</sup>:

Հայն աշխարհագիր Ստրաբոնը գրում է, որ Միջագետքը երեք ժողովուրդներից էր բաղկացած՝ հայերից, սիրիացիներից և արաբներից<sup>28</sup>, իսկ ժողովուրդներն այդ ժամանակ հաղորդակցվում էին սիրիա-արաբական կոյնեով<sup>29</sup> (*կոյնեն տեղական բարբառների կամ բարբառախմբերի հիման վրա կազմավորված ընդհանուր գրական լեզուն էր*):

<sup>22</sup> Մ. Մուրադյան, Արաբական փոխառությունները միջին հայերենում, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2, Եր., 1967, էջ 30:

<sup>23</sup> Տե՛ս **H. Hübschmann**, Die Semitischen Lehnwörter im Altarmenischen, Zeitschrift der deutschen morgenländischen Gesellschaft, 1892; S. 226-268 (ZDMG): Նույնի *Armenische Grammatik*, Leipzig 1895; S. 259-280: Նույնի *Սեմական փոխառյալ բառեր հայերենի մեջ* («Ազգային մատենադարան», ԺԵ, Վիեննա, 1894, էջ 1-70):

<sup>24</sup> Անդ:

<sup>25</sup> Տե՛ս Ն. Սկրտչյան, Արաբերեն փոխառություններ հայերենում (նախքան արաբների արշավանքը Հայաստան), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, թիվ 3, 1984, թիվ 2; 1987, թիվ 10:

<sup>26</sup> Հ. Աճառյան, անդ, էջ 169:

<sup>27</sup> Տե՛ս հղում 25-ը:

<sup>28</sup> Տե՛ս **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, вып. 2, էջ 396-367:

<sup>29</sup> Տե՛ս **Н. В. Пигулевская**, Арабы у границ Византии и Ирана в IV-VI вв; М., 1964, էջ 30:

Պատմությունը վկայում է, որ մեր քվադրությունից առաջ եղել են արաբահայ մի քանի ընդհանուր քաղաքներ, ինչպես՝ Սոյննոսը, Արգարը: Սա ևս հաստատում է այն փաստը, որ երկու ժողովուրդների շփումները սկսվել են շատ վաղ ժամանակներից: Իսկ եթե եղել են այդպիսիք, ուրեմն անժխտելի են մահ լեզվական փոխադեցություններն ու փոխառությունները:

**3. А. ЕРВАНДЯН - К вопросу о соотношении среднеармянского с восточными языками.** - Каждый язык в процессе естественного развития, хоть и очень медленно, но подвергается изменениям. Прежде всего это выражается изменением в словарном запасе, переосмыслением слов, сужением и расширением смысла слов, формами проявления синонимов, а в грамматике - изменением падежных окончаний, формами множественного числа и т. д.

В мире нет изолированных языков, следовательно неизбежно испытываемое ими воздействие, в частности в виде заимствований: вековые сближения, отношения между народами, языковые метизации в результате побед и поражений в войнах способствуют этому процессу.

Еще до нашей эры язык персов, которые расширили границы своих владений и стремились к господству над миром, имел большое воздействие на языки завоеванных народов. Языки многих народов, которые приняли ислам, сочетаясь с арабским, образовали так называемый международный словарный запас, в основе которого лежит персидский язык. Этот активный словарь, созданный для выражения религиозных, юридических и новых понятий, Г. Ачарян назвал **восточным международным словарем.**

В статье описан тот пласт армянского языка, который был обогащен терминами указанного словаря, использовался в произведениях стихотворцев того времени и в дальнейшем, будучи активной частью словарного запаса, сохранился в отличие от книжного, научного, терминологического неактивного словарного запаса.